

## ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ  
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ՄԵՐ ԹԱՂԸ» ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, ՀՀ, Գյումրի

Էլ. հասցե՝ [gristinenikoghosyan@mail.ru](mailto:gristinenikoghosyan@mail.ru)

DOI: 10.24234/scientific.v1i51.316

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հետազոտության օբյեկտն է ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերի դրսևորումները Նար-Դոսի խոսքարվեստում՝ «Մեր թաղը» պատմվածաշարի լեզվական նյութի հիման վրա: Հոդվածի նպատակն է բացահայտել ոչ գրական բառապաշարի կիրառության լեզվաոճական առանձնահատկությունները և դրանց մասնակցությունը գեղարվեստական խոսքի կառուցվածքային կազմակերպմանը: Հետազոտության մեթոդաբանությունն ընտրվել է պատմագիտական և գրականագիտական և լեզվաբանական նյութերի վերլուծման սկզբունքների հիման վրա, հատկապես՝ կոնկրետ իրավիճակների ուսումնասիրմամբ և պատճառահետևանքային կապերի բացահայտմամբ: Իսկ որպես մեթոդ՝ դիտարկվել են ժողովրդախոսակցական եւ բարբառային միավորները՝ որպես խոսքի ժողովրդայնացման եւ կերպարների լեզվական առանձնահատկությունները ընդգծող միջոցներ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Նար-Դոսի ստեղծագործություններում ժողովրդախոսակցական և բարբառային միավորները հանդես են գալիս ոչ թե որպես խոսքի արտաքին ժողովրդայնացման միջոց, այլ որպես ստեղծագործության լեզվաոճական կառուցվածքի ներքին տարրեր՝ ապահովելով կերպարների լեզվական անհատականացումը, սոցիալական միջավայրի լեզվական արտահայտումը և հեղինակային խոսքի բազմաշերտ կազմակերպումը: Դրանց նպատակային և

տարբերակված գործածությունը պայմանավորված է հաղորդակցական իրավիճակով և գեղարվեստական մտածողության լեզվական մոդելավորման սկզբունքներով:

Ուսումնասիրության վերջնարդյունքը դրսևորվում է Նար-Դոսի լեզվի ոչ գրական շերտերի համակարգային վերաիմաստավորմամբ. սույն ուսումնասիրության մեջ ժողովրդախոսակցական և բարբառային բառապաշարը դիտարկվում է փոխկապակցված գործառական համակարգում՝ դրանց տարբերակմամբ համահասկանալիության աստիճանի և տարածական սահմանափակվածության չափանիշներով: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հստակեցնելու ոչ գրական բառաշերտերի ներքին կառուցվածքը և բացահայտելու դրանց դերը գեղարվեստական խոսքի կազմակերպման մեջ՝ ցույց տալով, որ դրանք մասնակցում են ոչ միայն կերպարային խոսքի ձևավորմանը, այլև հայ գրական լեզվի արտահայտչական հնարավորությունների հարստացմանը:

*Բանալի բառեր՝ գեղարվեստական լեզու, ժողովրդախոսակցական բառապաշար, բարբառային բառաշերտ, կերպարային խոսք, լեզվական անհատականացում, գործառական ոճաբանություն, լեզվաոճական կառուցվածք, հայ արձակ:*

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Նար-Դոսի գեղարվեստական լեզուն հայ գրական արձակում առանձնանում է խոսքային բազմաշերտ կառուցվածքով, որի կարևոր բաղադրիչներից են ժողովրդախոսակցական և բարբառային բառապաշարի միավորները: Գրողը ստեղծագործություններում գործածում է գրական, բարբառային և ժողովրդախոսակցական լեզվական միավորներ՝ ձևավորելով խոսքի այնպիսի համակարգ, որը նպաստում է կերպարների լեզվական անհատականացմանը և պատկերվող սոցիալական միջավայրի բնական վերարտադրմանը:

«Մեր թաղը» պատմվածաշարի պատմվածքների սյուժեն համապատասխան միջավայր պատկերելու, նրանում ծավալվող իրադարձությունները վերարտադրելու, իրական բներանգ ստեղծելու, գործող հերոսներին տիպականացնելու համար, բնականաբար, անհրաժեշտ են ոչ միայն գեղարվեստական վառ երևակայություն, լեզվաոճական համապատասխան միջոցներ, այլև որոշակի ժողովրդախոսակցական ու բարբառային բառերի օգտագործում (իհարկե, առանց վերջիններիս չարաշահման),

որոնց շնորհիվ խոսքը դառնում է ժողովրդաշունչ, իսկ կերպարները՝ տեսանելի, համոզիչ և իրական (Նար-Դոս, 1982):

Պատմվածաշարի լեզվի էական առանձնահատկություններից մեկը ժողովրդայնությունն է, որը, ինչպես նշում է Հ. Հարությունյանը, «ամենից առաջ ենթադրում է ժողովրդական լեզվամտածողության էական գծերի հմուտ օգտագործում» (Հարությունյան, 1979):

Նար-Դոսի լեզվի ժողովրդայնության մասին այս դիտարկումները իրենց արտացոլումն են գտել նաև գրականագիտական գնահատականներում: Մասնավորապես, գրողի կողմից ժողովրդական այդ ճոխ գանձարանից օգտվելու ձևն ու չափը, ինչպես կասեր Հ. Թումանյանը, «շնորհքի բան է» (Թումանյան, 1994):

Նար-Դոսն այդպիսի «շնորհքով» օժտված հեղինակ էր, որին հաջողվեց ստեղծել գեղարվեստական խոսքի մի այնպիսի լեզվական համակարգ, որ, լինելով իրենը, միաժամանակ ժողովրդին էր ու ժողովրդական: «Նար-Դոսը մեր իրապաշտ վեպի մեծ գիտակից վարպետներից մեկն էր: Նա... ուշադիր հետազոտում էր, մանրագնին դիտում, իրականության լույսի տակ, մարդկային ալեկոծվող, ծովածավալ կյանքը՝ կրքերի բախում, շահերի կռիվ, վիշտ, կեղեքում, տանջանքներ... հաղթողներ և պարտվածներ՝ հասարակական թոհուբոհը: Իր ոճը իրեն պես էր: Իրեն պես անկեղծ, պարզ, լուրջ, զուսպ, ճշգրիտ: Նար-Դոսը մեր խոսքի լուրջ վարպետներից էր և մեր գրականության հարատև փառքերից մեկը» (Սահակյան, Ներսիսյան, 2005), սա թերևս Նար-Դոսի լեզվի ժողովրդայնության ամենախոր, ընդգրկուն գնահատականն է:

Նար-Դոսի լեզվի ժողովրդայնության մասին առկա գրականագիտական դիտարկումները հիմնականում շեշտադրել են նրա խոսքի գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները, մինչդեռ ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերի փոխկապակցված գործառական դրսևորումների համակարգային քննությունը շարունակում է մնալ հատուկ ուսումնասիրություն պահանջող ոլորտ: Այդ համատեքստում նպատակահարմար է քննության առնել, թե ինչ լեզվական միջոցներով են նշված բառաշերտերը իրացվում «Մեր թաղը» պատմվածաշարի առանձին կերպարների խոսքում:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության առարկան Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի լեզվում ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերի գործառական դրսևորումներն են դրանց կառուցվածքային, իմաստային և ոճական հատկանիշների համատեքստում: Հետազոտության նյութը կազմում են պատմվածաշարից քաղված լեզվական միավորները, որոնք ենթարկվել են նպատակային ընտրության և դասակարգման:

Աշխատանքում կիրառվել են նկարագրական, կառուցվածքային-գործառական և համադրական վերլուծության մեթոդները, որոնց համակցված կիրառմամբ հնարավոր է դարձել բացահայտել ոչ գրական բառապաշարի դերակատարությունը գեղարվեստական խոսքի կազմակերպման և կերպարային լեզվի մոդելավորման գործընթացում:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լեզվաբանական գրականության մեջ ժողովրդախոսակցական բառաշերտը դիտարկվում է որպես գրական լեզվի խոսակցական տարբերակ, որը ձևավորվում և գործածվում է բանավոր հաղորդակցման պայմաններում: Ժողովրդախոսակցական բառաշերտը գրական լեզվի խոսակցական տարբերակն է, որը հակադրվում է պաշտոնականին իր անմիջականությամբ: Այս շերտը նաև գրական լեզուն ժողովրդի կենդանի լեզվին կապող օղակն է, գրական երկը հոգեհարազատ է դարձնում ժողովրդի բոլոր խավերին՝ դրանով իսկ մասամբ մեղմացնելով գրական և խոսակցական լեզուների միջև եղած տարբերությունը (Հարությունյան, 1979):

Ժողովրդախոսակցական բառաշերտին պատկանող լեզվական միավորների գործառությամբ առանձնահատկությունները մասին Ա. Եֆիմովը նշում է. «Ժողովրդախոսակցական բառաշերտի բառերը լեզվական այնպիսի միջոցներ են, որոնք նախ և առաջ գործածվում են համազգային խոսակցական, կենցաղային լեզվի տարբեր ոճերում և դուրս են եկել գրական արտահայտության համընդհանուր ճանաչում գտած միջոցների ու նորմերի սահմաններից» (Ефимов, 1957): Ներկայացված սահմանումները ցույց են տալիս, որ ժողովրդախոսակցական բառաշերտը գրական լեզվի և կենդանի խոսակցական լեզվի փոխազդեցության կարևոր դրսևորումներից է:

Վերոնշյալ տեսական դրույթները հիմք են Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի լեզվում ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերի գործառական դրսևորումների քննության համար, որոնք հատկապես տեսանելի են կերպարների խոսքում՝ հանդես գալով ոչ միայն որպես լեզվական, այլև կերպարակերտման կարևոր միջոցներ:

***Ժողովրդախոսակցական բառաշերտը Նար-Դոսի խոսքում***

Բառապաշարը ոճաբանական և հուզաարտահայտչական երանգավորման տեսանկյունից դասակարգելիս առանձնացվում են գրական և ոչ գրական (իր ենթաշերտերով՝ բարբառային և ժողովրդախոսակցական բառեր) բառաշերտերը:

Բառապաշարի ժողովրդախոսակցական շերտը Նար-Դոսի համար ոչ թե միջոց է եղել կերտելու իր ստեղծագործությունները, այլ սեփական մտածողությանը համապատասխան ինքարտահայտման եղանակ, քանզի բխում է իր էությունից: Այդ պատճառով էլ ժողովրդականի տարրերով հագեցած են և՛ հեղինակային խոսքը, և՛ հերոսներինը: Մինևույն ժամանակ Նար-Դոսը հստակ գիտակցել է յուրաքանչյուր բառի կշիռն ու արժեքը, նրա տեղն ու դերը խոսքում, ինչի լավագույն ապացույցն այն է, որ իր գործածած խոսակցական կամ բարբառային բառերի ոճական արժեքն ընդգծելու կամ էլ դրանցով միջավայրը տիպականացնելու, հերոսներին անհատականացնելու նպատակամիտվածությամբ միաժամանակ գործածել է տվյալ բառի ժողովրդական կամ բարբառային տարրերակը՝ որպես հերոսների անհատականացման, միջավայրի ընդգծման ոճական միջոց, իսկ հեղինակային խոսքում՝ դրա գրական համարժեքը:

Ժողովրդախոսակցական լեզվի անբաժանելի մասն են ձայնարկությունները, որոնք խոսքին հաղորդում են անմիջականություն, կենդանություն և հուզական երանգավորում: Դրանք, որպես կանոն, նախադասության մեջ հանդես են գալիս միջանկյալ բառի գործառույթով և արտահայտում են հերոսների զգացմունքային վիճակները՝ ցավն ու տառապանքը, ուրախությունն ու հրճվանքը, զարմանքը, ափսոսանքն ու հիացմունքը: Նմանօրինակ կիրառությունները պատմվածաշարում մեծաթիվ են և բնորոշ են հատկապես հերոսների երկխոսություններին.

*«- Վա՛յ, հայրիկ ջան...» (Նար-Դոս, 1982):*

*Վո՛ւյ, վո՛ւյ, ոնց ա թակում... Քա՛, քա՛, քա՛՝ ձեռներն ու ոտներն էլ կապել ա թոկով... (Նար-Դոս, 1982):*

*«- Էէ՛հ, - նեղսրտությամբ արտասանեց Սաքուլը. . .» (Նար-Դոս, 1982):*

«- *Ա'իս, որդի, որդի. . .*» (Նար-Դոս, 1982):

«- *Ջա'ն, ջա'ն, մատաղ, ջա'ն*, - արտասանեց պատավ Մարանը» (Նար-Դոս, 1982):

Նման կիրառություններում ձայնարկությունները ձևավորում են խոսքի հուզաարտահայտչականությունը և միաժամանակ ծառայում են կերպարների սոցիալական և հոգեբանական անհատականացմանը:

Ժողովրդախոսակցական բառաշերտի շրջանակում առանձնանում են նաև խոսքի գնահատողական և հուզական արտահայտման այլ միջոցներ, որոնց շարքին են պատկանում օրինանքներն ու անեծքները: Վերջիններս երկխոսություններում զգալի տեղ են զբաղեցնում՝ խոսքին հաղորդելով արտահայտչական երանգ և արտացոլելով կերպարների հուզական ու սոցիալական դիրքորոշումները: Օրինակ՝ «*քու սիրտը չմեռնի*» (Նար-Դոս, 1982), «*սև գրողը տեսնի պոլիցի երեսը*» (Նար-Դոս, 1982), «*տափը դնեմ նրա գլուխը*» (Նար-Դոս, 1982), «*ձեր ծնունդը չորանա*» (էջ 34), «*հողեմ գիժ գլուխդ*» (էջ 67), «*ջանը կրակ ընկնի*» (էջ 44), «*ընենց քնով անցնես, որ էլ վեր չկենաս*» (էջ 50), «*չոռ արեք*» (էջ 58), «*արևդ ապրի*» (էջ 53) և այլն:

Նման ձևակերպումները ոչ միայն արտահայտում են կերպարների հուզական վիճակը, այլև լեզվական մակարդակում վերարտադրում են տվյալ սոցիալական միջավայրի արժեքային համակարգն ու խոսքային ավանդույթները:

Ժողովրդախոսակցական բառաշերտում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում անձնանունների ժողովրդախոսակցական ձևերը (*Դարչո, Նատո, Յական, Էփո, Օսան, Մաքուլ, Մայի, Ակոբ, Անան, Հեղնար, Մարան, Սոնե* և այլն), որոնք գործածվում են կերպարների լեզվական անհատականացման և միջավայրի սոցիալական բնութագրման նպատակով:

Անձնանունների ժողովրդական ձևափոխված տարբերակների կողքին կիրառվում են նաև ժողովրդական մականուններ (օրինակ՝ «*թաքախ ման ածող Յական*», «*գիր բացող Գրիգոր*»), որոնց միջոցով ընդգծվում է կերպարի սոցիալական դիրքը և անհատական բնութագիրը՝ միաժամանակ ձևավորելով գնահատողական երանգ:

Անձնանունների հետ մեկտեղ հաճախ գործածվում են նաև դիմելաձևեր՝ «*աղա*», «*ագի*», «*նանի*» և այլն, որոնք արտահայտում են ավանդական խոսքային էթիկետի ձևերը և արտացոլում են տվյալ միջավայրի սոցիալ-հաղորդակցական նորմերը:

Անվանական և դիմելաձևային միավորներից բացի, ժողովրդախոսակցական շերտը Նար-Դոսի խոսքարվեստում դրսևորվում է նաև լայն բառապաշարային կազմով:

Գրողի լեզվում գործածվում են բազմաթիվ խոսակցական բնույթի բառեր և արտահայտություններ, որոնք վերարտադրում են առօրյա հաղորդակցական միջավայրը և խոսքին հաղորդում բնականություն ու կենդանի հնչերանգ: Դրանց շարքին են պատկանում ինչպես կենցաղային իրողությունները բնութագրող բառերը («գրբաց», «նըմուտ», «աստոձ», «գորթ»), այնպես էլ գործողություն և շարժում արտահայտող բայերը («ճղճղացնել», «շփշփալ», «քչքչալ», «մրթմրթալ», «թրխկացնել», «փոփռացնել»), ինչպես նաև կերպարի վիճակն ու արտաքին նկարագիրը բնորոշող միավորները («անտեր-մունդրիկ», «մսեղ մարդ», «քրտնքակոխ», «պատառոտուն») և այլն:

Ժողովրդախոսակցական շերտի վերոնշյալ միավորների գործառական դրսևորումները դիտելի են հետևյալ օրինակներում. «Պառավը, խորին վշտով համակված, մի կարճ ժամանակ խոնարհված մնաց որդու վրա, հետո մի ծանր թառանչ քաշեց, գնաց բաց արեց կապոցը և սկսեց *թեժ-թեժ հացերը* փռել թախտի վրա, որ սառչեն: Այժմ սենյակի մեջ տարածվեց *տաք-տաք հացերի* ախորժալի հոտը» (էջ 6), «Շուտով նրա աչքերի *կոպերը ծանրացան*, և նա նստած տեղը *սկսեց նիրհել*» (էջ 35), «Գոնե քունը գար, որ թերևս առժամանակ մոռանար այն անտանելի *պապակը: Ոգելից խմիչքի ծարավը* չէր այնքան, որ տանջում էր նրան. . .» (էջ 36):

Այսպիսով, Նար-Ղոսի խոսքում ժողովրդախոսակցական բառաշերտը, պահպանելով իր համազգային և կենցաղային բնույթը, գործածվում է գրական լեզվի խոսակցական ենթահամակարգին բնորոշ արտահայտչական միջոցների կարգավիճակով: Այն հանդես է գալիս որպես գեղարվեստական խոսքի կառուցվածքային-գործառական բաղադրիչ՝ համակարգային կերպով ներգրավված կերպարների լեզվական տարբերակման և պատկերվող սոցիալական միջավայրի ոճական վերարտադրության գործընթացում:

### ***Բարբառային բառաշերտը Նար-Ղոսի խոսքում***

Ժողովրդախոսակցական բառաշերտի քննությունը ցույց է տալիս, որ ոչ գրական լեզվական միավորների գործածությունը Նար-Ղոսի խոսքում ներառում է նաև տարածքային բնույթ ունեցող դրսևորումներ, որոնք պայմանավորում են բարբառային բառաշերտի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Բարբառային բառերը՝ որպես լեզվի տարածքային բառաշերտի միավորներ, գտնվում են գրական լեզվի նորմի սահմաններից դուրս և գործառական ոճերում սովորաբար չեն կիրառվում՝ բացառությամբ հատուկ ոճավորման կամ մեջբերման

դեպքերի: Գեղարվեստական խոսքում, սակայն, դրանք հանդես են գալիս որպես գիտակցված ոճական միջոց՝ ծառայելով միջավայրի տիպականացմանը և կերպարների խոսքի անհատականացմանը:

Ի տարբերություն ժողովրդախոսակցական բառերի՝ բարբառային բառաշերտը ունի տարածքային սահմանափակում և բնորոշ է որոշակի խոսքային միջավայրի՝ լիարժեք ընկալելի լինելով հիմնականում տվյալ բարբառախոս հանրության շրջանակում (*Հայոց լեզվի բարբառային բառարան*, 2002):

Բարբառային բառաշերտի քննությունը չի սահմանափակվում միայն հեղինակի ծննդավայրի խոսվածքային նյութով, քանի որ այն ներառում է նաև հին հայերենից և տարբեր օտար լեզուներից (արաբերեն, թուրքերեն, պարսկերեն, ռուսերեն) փոխառված ձևեր, որոնք պատմաժամանակագրական հենքի վրա ընկալվում են որպես խոսվածքին հարազատ բառեր: Դա պայմանավորված է փոխառյալ բառերի հնչյունական, քերականական և իմաստային յուրացմամբ ու կանոնավոր գործածությամբ:

Բարբառային բառերի մի մասը տարածքային առումով հասկանալի է մի քանի բարբառախոս շրջաններում և ունի համեմատաբար լայն գործածություն: Նյութի քննությունը ցույց է տալիս, որ այդ միավորները գործածական են ինչպես *Ուլ*, այնպես էլ *Կը* ճյուղի բարբառներում (Արարատյան, Ղարաբաղի, Լոռու, Թբիլիսիի, նաև Կարնո բարբառի խոսվածքներում):

Նար-Դոսի գեղարվեստական խոսքում բառապաշարի ժողովրդախոսակցական և բարբառային շերտերը հանդես են գալիս անքակտելի միասնության մեջ, և դրանք միմյանցից հստակ զատորոշելը հաճախ դժվար է: Այդուհանդերձ, սույն ուսումնասիրության մեջ դրանց տարբերակումը փորձել ենք իրականացնել գործածության տարածական սահմանափակվածության և համահասկանալիության աստիճանի հիման վրա:

Ուստի ժողովրդախոսակցական բառերի ճանաչումն ու առանձնացումը կատարել ենք՝ նկատի ունենալով դրանց համահասկանալիությունը՝ ի տարբերություն բարբառային բառաձևերի (գավառաբանությունների), որոնք, ինչպես նշվում է լեզվաբանական գրականության մեջ, «նեղ տեղային բնույթի են, անմատչելի հանրության համար և բավական հեռու գրական նորմայից» (Մելքոնյան, 1984):

Ժողովրդախոսակցական բառապաշարը, իր հերթին, «մատչելիությամբ և համահասկանալիությամբ յուրահատուկ տեղ է գրավում գրքային, ինչպես և

տարածական սահմանափակություն ունեցող առանձնացված, մեկուսացված բարբառային խոսքի նկատմամբ՝ վերջիններիս հանդեպ ունենալով ակնհայտ առավելություն» (Էլոյան, 1989):

Այս առումով բարբառային բառերի հնչունական առանձնահատկությունների քննությունը տվյալ դեպքում կարևոր է ոչ թե պատմալեզվաբանական նկարագրության տեսանկյունից, այլ որպես գեղարվեստական խոսքում կերպարների լեզվական անհատականացման և միջավայրի բնական հնչերանգի ձևավորման միջոց:

*Բարբառային* (և խոսակցական) բառաշերտում առկա են գրական ձևերի հնչունական վերափոխմամբ պայմանավորված տարբերակներ, որոնք դրսևորվում են հնչունափոխության տարբեր տեսակներով՝ երկհնչունների պարզեցմամբ, ձայնավորների հնչունափոխմամբ, ինչպես նաև բաղաձայնների անկմամբ, հավելմամբ և դրափոխությամբ:

Առավել հաճախակի հանդիպում է երկհնչունների պարզեցումը: Այսպես՝

*«Օղորմածիկ Դարչոյի էն (այն) շաշ մերը . . .» (էջ 21),*

*«Ձենդ կտրի, թե չէ, էս (այս) ա, էլի վեր կացա» (էջ 58),*

*«. . . որ ինձ էստեղը (այստեղ) հասցրին . . .» (էջ 16),*

*«Էննա (այն է), իրիկնապահին, խալխը որ քաշվում ա, Դարչոյի մերը . . .» (էջ 20):*

Նման հնչունական պարզեցումները ոչ միայն վկայում են խոսվածքային շերտի առկայության մասին, այլև գործառական մակարդակում ապահովում են կերպարների լեզվական բնականությունը՝ ձևավորելով տարածականորեն կոնկրետ խոսքային միջավայր:

Երկհնչունների պարզեցմանը զուգահեռ հանդիպում են նաև ձայնավորների հնչունափոխության դեպքեր, ինչպես՝ «*իրեք*» (երեք) և «*քսոր*» (այսօր) ձևերը, ինչպես՝

*«Իրեք (երեք) օր ա չորչարվել էս . . .» (էջ 20):*

*«Վու՛յ, չէ, Բաղդո ջան, քսոր (այսօր) են ածել» (էջ 48):*

Ձայնավորների հնչունափոխության հետ մեկտեղ դիտվում են նաև ձայնավորների սղման դեպքեր: Այդպիսիք են՝ «*հմար*» (համար), «*պտի*» (պիտի), «*սհաթ*» (սահաթ) և այլն:

Բարբառային խոսքում նկատվում են նաև բաղաձայնային փոփոխություններ, որոնք արտահայտվում են բաղաձայնի անկման, հավելման և դրափոխության ձևերով:

Բաղաձայնի անկումը դրսևորվում է, մասնավորապես, «հ» հնչյունի կորստով, ինչպես՝

*«Եվ եթե երբեմն աջողվում էր այդ, Հոպոպն ավելի էր կատաղում» (էջ 68):*

*«- Ետո ինչ: Ետո էն, որ իրեք հատ են ու շատ էլ չար» (էջ 24):*

Նույն ենթատեսակին է պատկանում նաև «կե» (կեր) ձևը, որտեղ նկատվում է վերջին «ր» բաղաձայնի անկում:

*«... վեր կաց, կե (կեր)» (էջ 5):*

Ուսումնասիրվող նյութում բաղաձայնի հավելումը դրսևորվում է, մասնավորապես, բառամիջում «ն» հնչյունի ավելացմամբ, ինչպես «մենձ» (մեծ) և «փոնիցր» (փոից) ձևերում:

*«- Էս մենձը քիրն ա, ասում, թե կնիկը, շատ ա դարդ անում» (էջ 20):*

*«- Ազին էլ հրես փոնիցր (փոից) հացերը կբերի» (էջ 5):*

Բաղաձայնի հավելման և անկման կողքին բարբառային խոսքում նկատվում են նաև հնչյունների դրափոխության երևույթ, ինչպես՝

*«Էհ, երեխեք են, էլի, ուստա Ասատուր, ինչ ես անգաջ դնում... (էջ 64):*

Չայնավորային և բաղաձայնային հնչյունական փոփոխությունները արտացոլում են խոսվածքային համակարգի ներքին օրինաչափությունները և գեղարվեստական խոսքում նպաստում միջավայրի տեղայնացմանն ու կերպարների լեզվական անհատականացմանը:

Բարբառային շերտին բնորոշ են հետևյալ բառային միավորները՝ *քշտած, տերտեր, հեքիմ, մենձ, պտի, վախտ, բոկոտն, դազգահ, ջուլհակ, սուփրա, փռան, թութա, ախառի, խալի, լեզվակոխ, անեծքակոխ* և այլն:

Բարբառային առանձնահատկությունները դրսևորվում են ոչ միայն հնչյունական, այլև իմաստային մակարդակում: Ս. Մելքոնյանը գրում է. «Բարբառային իմաստը գրական բառի այն իմաստային առումն է, որը ընդհանուր գրական արժեք չունի: Նման դեպքերում բառը ձևով գրական է, իսկ իմաստային այս կամ այն առումով՝ բարբառային» (Մելքոնյան Ս., 1984):

Այդպիսի կիրառություն կարելի է տեսնել, օրինակ, **թափել** բառի դեպքում՝

*«Այդ երեք տարվա ընթացքում նրանք քանդվեցին, քարը քսվեցին, տանն էլ ոսկեղենն ու արծաթեղենն չմնաց՝ գրավ դրին, ժամանակին չկարողացան թափել՝*

*կորցրին» (էջ 4) (բարբ.՝ ազատել, այսինքն՝ գրավը մարել) (Հայոց լեզվի բարբառային բառարան, 2002):*

Ժողովրդախոսակցական և բարբառային խոսքում բառերի իմաստային ընդլայնումը դրսևորվում է բարբառային բազմիմաստության ձևավորմամբ, որը հարստացնում է խոսքի իմաստային կառուցվածքը: Այսպես՝ *թակել* բառը ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում գործածվում է *ծեծել, խփել* իմաստներով: Օրինակ՝ *«Այժմ անձրին սկսեց թակել ուղղակի նրա գլուխն ու մեջքը» (էջ 14):*

Գործառական առումով նման կիրառություններում բառը ձեռք է բերում լրացուցիչ արտահայտչական և պատկերավոր արժեք՝ նպաստելով նկարագրվող երևույթի կենդանի և ազդեցիկ ներկայացմանը:

Բարբառային բառերը Նար-Դոսի գեղարվեստական խոսքում գործածվում են ստեղծագործության թեմատիկ և միջավայրային պայմանավորվածությամբ՝ ծառայելով կերպարների խոսքի ոճավորմանը և պատկերվող տարածական իրականության վերարտադրմանը:

Բարբառային բառերի գործառական դերը հստակ երևում է նաև հետևյալ օրինակներում՝ *«Կովեղիս նախ երկար ժամանակ լեզվակոխու ու անեծքակոխու էր անում համարձակ հակառակորդին. . .» (էջ 41), «Մեկը մյուսի հետևից կամացուկ, իրար հրելով ու փսփսալով ներս էին մտնում թաղի կանայք և տասպ անում իրար քամակի» (էջ 22):*

Այստեղ *«լեզվակոխ», «անեծքակոխ»* և *«տասպ անել»* ձևերը խոսվածքային-բարբառային բնույթի միավորներ են, որոնք հաղորդում են խոսքին տեղայնացված գունավորում՝ ընդգծելով կերպարների սոցիալական միջավայրն ու խոսքի ինքնատիպությունը: Այսպիսով, բարբառային միավորները հանդես են գալիս որպես կերպարային լեզվի ոճական ձևավորման միջոցներ:

Բարբառային բառերը կարևոր դեր ունեն նաև քաղաքային-փողոցային միջավայրի ներկայացման մեջ: Օրինակ՝ *«Այդ լռությունը խանգարում է խառ թուր ծախող մի կինտո, որը թաբախը գլխին և կշեռքն ուսին՝ անցնում է դրան մոտով և իր առողջ թոքերի ամբողջ թափով աղաղակում. «Թուրա՛, թուրա՛, ախառի՛ թուրա»» (էջ 15):* Այստեղ *«կինտո», «թաբախ», «թուրա», «ախառի»* ձևերը ոչ միայն խոսվածքային-բարբառային միավորներ են, այլև սոցիալական միջավայրի ցուցիչներ: Դրանք կերպարի խոսքը տեղայնացնում են՝ ընթերցողի առաջ ձևավորելով կոնկրետ քաղաքային

իրականություն: Կրկնվող «թուլթա» կանչաձևը և դրա հնչերանգային երկարաձգումը ընդգծում են փողոցային վաճառքի իրավիճակային ընթացքը և խոսքի անմիջականությունը:

Ժողովրդախոսակցական և բարբառային բառապաշարում առանձնանում են նաև կենցաղային կյանքի իրողությունները ներկայացնող միավորներ, որոնց միջոցով բացահայտվում են գրողի պատկերած միջավայրը և այնտեղ ապրող մարդկանց կենսակերպը: Դրանք վերաբերում են գյուղական կյանքին ու կենցաղին բնորոշ առարկաների, գործողությունների և երևույթների անվանումներին, ինչպես նաև բույսերի, կենդանիների և այլ նյութական իրողությունների նշումներին:

Լեզվաբանական գրականության մեջ նման բառապաշարը բնութագրվում է որպես «կենցաղագրական բառաշերտ» (Եզեկյան, 2007): Գյուղական կոլորիտի ստեղծման և ժամանակաշրջանի իրական պատկերի վերարտադրության գործում այս միավորներն ունեն կարևոր դեր՝ նյութականացնելով միջավայրային պատկերը և հստակեցնելով տվյալ ժամանակի հայ մարդու կենցաղին ու ապրելակերպին բնորոշ իրողությունները: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը՝ «Այս բառաշերտի հիմնական առանձնահատկությունն այն է, որ անվանում և ավելի պարզորոշ է դարձնում այն առարկաներն ու երևույթները և այնպիսի հասկացողություններ, որոնք բնորոշ են տվյալ ժամանակաշրջանի հայ մարդուն, նրա կենցաղին ու ապրելակերպին» (Եզեկյան, 2007):

Այդ բառերի մեջ առանձնանում են ինչպես հագուստին վերաբերող միավորները (*չուխա, աբա, չուստ, թասակ, դերիա, աղլուխ, ոտնաման, մթել*), այնպես էլ գյուղական կյանքն ու կենցաղը բնութագրող բառերը (*թելեժկա, կապերտ, թոկ, հինաձ, տխիլ, խանչալ, գավ*):

Գործառական առումով նման բառապաշարի գործածությունը ոչ միայն ապահովում է միջավայրի տեսանելի և նյութականացված պատկերը, այլև նպաստում է կերպարների սոցիալական դիմագծերի և խոսքի անհատականացմանը:

Ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերի համադրական քննությունը ցույց է տալիս, որ դրանք «Մեր թաղը» պատմվածաշարի լեզվական համակարգում գործում են փոխլրացնող հարաբերությամբ: Ժողովրդախոսակցական միավորները ապահովում են խոսքի հաղորդակցական բնականությունը և համազգային ընկալելիությունը, մինչդեռ բարբառային ձևերը իրականացնում են տարածական և

սոցիալական կոնկրետացում՝ տեղայնացնելով կերպարների խոսքը և միջավայրային պատկերը:

Նույն տեքստային միջավայրում դրանց համակցված գործածությունը ձևավորում է լեզվական բազմահարթություն, որի շրջանակում խոսքը ձեռք է բերում թե՛ համընդհանուր հաղորդակցական հասանելիություն, թե՛ տեղային հնչերանգային առանձնահատկություն:

Այս համադրությունը հատկապես տեսանելի է կերպարների երկխոսություններում, որտեղ ժողովրդախոսակցական շերտը կառուցում է բնական խոսքային հոսք, իսկ բարբառային միավորները նշանավորում են սոցիալական պատկանելիությունը և տարածական միջավայրը:

### **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով՝ ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի լեզվական կառուցվածքում ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերը հանդես են գալիս որպես գեղարվեստական խոսքի ներքին բաղադրիչներ՝ ապահովելով կերպարների լեզվական անհատականացումը և սոցիալական միջավայրի լեզվական արտահայտումը: Վերլուծությամբ հստակեցվեցին երկու շերտերի տարբերակման սկզբունքները՝ համահասկանալիության աստիճանի և տարածական սահմանափակվածության հիմքով, ինչպես նաև ցույց տրվեց դրանց փոխլրացնող գործառույթը նույն տեքստային համակարգում: Հետազոտական նյութը վկայում է, որ բարբառային և ժողովրդախոսակցական միավորների կիրառությունը պայմանավորված է ոչ միայն ժողովրդայնության գեղարվեստական սկզբունքով, այլև խոսքի կառուցվածքային կազմակերպմամբ՝ նպաստելով կերպարային խոսքի շերտավորմանը և միջավայրային կոնկրետությանը:

Այսպիսով, «Մեր թաղը» պատմվածաշարի լեզուն հանդես է գալիս որպես լեզվական բազմաշերտ ամբողջություն, որտեղ ոչ գրական բառապաշարը ներգրավված է գեղարվեստական խոսքի կառուցման գործընթացում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Էլոյան Ս. (1989). *Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն*: Երևան:
- Թումանյան Հ. (1994). *Երկերի ժողովածու* (հ. 6): Երևան:
- Հայոց լեզվի բարբառային բառարան (հ. 2): (2002). Երևան: ՀՀ ԳԱԱ Հրատյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, «Գիտություն» հրատ.
- Հարությունյան Հ. (1979). *Գրողի լեզվի և ոճի հարցեր*: Երևան.
- Մելքոնյան Ս. (1984). *Այնարկներ հայոց լեզվի ոճաբանության*: Երևան.
- Նար-Դոս. (1982). *Մեր թաղը*: Երևան.
- Սահակյան Վ., Ներսիսյան Ռ. (2005). *Գնահատանքի խոսքեր հայոց մեծերի մասին*: Երևան.
- Ефимов А. И. (1957). *Стилистика художественной речи*: Москва.

## REFERENCE LIST

- Eloyan S. (1989). *Sovremennaya armyanskaya leksicheskaya stilistika (Modern Armenian lexical stylistics)*. Erevan.
- Tumanyan G. (1994). *Sbornik sochinenij (Collection of works)*. (tom 6). Erevan.
- Dialektnyj slovar' armyanskogo yazyka (Dialectal Dictionary of the Armenian Language)*. (2002). (tom 2). Erevan. Institut yazyka im. Grach'ya Acharyana Nacional'noj akademii nauk Respubliki Armeniya, izdatel'stvo «Nauka».
- Arutyunyan G. (1979). *Voprosy yazyka i stilya pisatelya (Questions of language and style of the writer)*. Erevan.
- Melkonyan S. (1984). *Ocherki po stilistike armyanskogo yazyka (Essays on the stylistics of the Armenian language)*. Erevan.
- Nar-Dos. (1982). *Nash rajon (Our district)*. Erevan.
- Saakyan V., Nersisyan R. (2005). *Slova blagodarnosti velikim armyanam (Words of gratitude to the great Armenians)*. Erevan.
- Efimov A. I. (1957). *Stilistika hudozhestvennoj rechi (Stylistics of artistic speech)*. Moskva.

## РЕЗЮМЕ

### ФУНКЦИОНАЛЬНЫЕ ПРОЯВЛЕНИЯ НАРОДНО-РАЗГОВОРНОГО И ДИАЛЕКТНОГО ЛЕКСИЧЕСКИХ СЛОЁВ В ЦИКЛЕ РАССКАЗОВ НАР-ДОСА «НАШ КВАРТАЛ»

Кристине Никогосян

Объектом исследования являются проявления народно-разговорного и диалектного лексических слоёв в художественной речи Нар-Доса на материале языка цикла рассказов «Наш квартал». Цель исследования заключается в выявлении лингвостилистических особенностей употребления нелитературной лексики и определении её роли в структурной организации художественной речи. Проведённый анализ показывает, что в произведениях Нар-Доса разговорные и диалектные единицы выступают не столько как средство внешней «народности» речи, сколько как внутренние элементы языково-стилистической структуры произведения, обеспечивая языковую индивидуализацию персонажей, отражение языковой среды социальной действительности и многослойную организацию авторской речи. Их целенаправленное и дифференцированное употребление обусловлено коммуникативной ситуацией и принципами языкового моделирования художественного мышления. Методология исследования основана на принципах историко-филологического и литературоведческого анализа, а также анализа лингвистического материала, в частности через изучение конкретных ситуаций и выявление причинно-следственных связей. В качестве метода анализируются народно-разговорные и диалектные единицы как средство придания речи народного характера и средство подчёркивания языковых особенностей персонажей.

Научная новизна исследования проявляется в системном переосмыслении нелитературных слоёв языка Нар-Доса. В настоящем исследовании разговорная и диалектная лексика рассматриваются как взаимосвязанная функциональная система с их разграничением по степени общеупотребительности и пространственной ограниченности. Такой подход позволяет уточнить внутреннюю структуру нелитературных лексических слоёв и выявить их роль в организации художественной речи, показывая, что они участвуют не только в формировании речевой характеристики

персонажей, но и в обогащении выразительных возможностей армянского литературного языка.

*Ключевые слова:* художественный язык, разговорная лексика, диалектный словарный слой, речь персонажей, языковая индивидуализация, функциональная стилистика, языково-стилистическая структура, армянская проза.

## SUMMARY

### FUNCTIONAL ROLES OF COLLOQUIAL AND DIALECTAL LEXICAL LAYERS IN NAR-DOS'S SHORT STORY CYCLE "OUR NEIGHBORHOOD"

**Kristine Nikoghosyan**

The object of this study is the manifestations of colloquial and dialectal lexical layers in Nar-Dos's artistic language, based on the linguistic material of the short story cycle "Our Neighborhood". The aim of the study is to identify the linguistic-stylistic features of non-literary vocabulary usage and to determine its role in the structural organization of artistic discourse. The methodology of the study is based on the principles of historical, literary, and linguistic analysis, particularly through examining specific situations and identifying cause-and-effect relationships. Colloquial and dialectal units were analyzed as means of popularizing speech and emphasizing the linguistic characteristics of the characters. The analysis demonstrates that in Nar-Dos's works colloquial and dialectal units function not merely as a means of externally "popularizing" the speech, but rather as internal elements of the linguistic and stylistic structure of the text. They contribute to the linguistic individualization of characters, the representation of the linguistic environment of the social milieu, and the multilayered organization of the author's narrative. Their purposeful and differentiated usage is conditioned by the communicative situation and by the principles of linguistic modeling of artistic thought.

The main result of the study lies in the systemic reinterpretation of the non-literary layers of Nar-Dos's language. In this research, colloquial and dialectal vocabulary are considered within an interconnected functional system, differentiated according to the degree of general comprehensibility and spatial limitation. This approach makes it possible to clarify the internal structure of non-literary lexical layers and to reveal their role in the organization of artistic

discourse, demonstrating that they contribute not only to the formation of characters' speech but also to the enrichment of the expressive potential of the Armenian literary language.

***Keywords:** literary language, colloquial vocabulary, dialectal lexical layer, character speech, linguistic individualization, functional stylistics, linguistic-stylistic structure, Armenian prose.*

Հոդվածը ստացվել է՝ 14.01. 2026

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 17.01. 2026

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 22.02.202